

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**



**РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН
АРМАВИРА**

0901 ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<< ----- >>----- 2017թ. թիվ _____

Ձեր << ----- >>----- թ. թիվ-----

**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ«ՀԵՏՔ»
ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 23.11.2017թ. գրության տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզում գազաֆիկացված չեն 97 համայնքներից 87-ը՝ Բերքաշատ, Արաքս (Էջմիածնի տարածք), Մեծամոր գյուղ, Հայկաշեն, Լեռնամերձ, Երվանդաշատ, Բագարան, Արգինա, Կողբավան և Արտամետ համայնքները:

Գազաֆիկացված չեն մարզում գործող 122 հանրակրթական դպրոցներից 22-ը, որոնցից 13-ում ջեռուցումը կազմակերպվում է հեղուկ վառելիքի վառարանների միջոցով (Նոր Արմավիր, Ջանֆիդա, Ջրաշեն, Այգեշատ (Վաղարշապատի տարածք), Արագած, Պտղունք, Լուսագյուղ, Բաղրամյան (Բաղրամյանի տարածք), Տավորիկ, Արևադաշտ, Հայկաշեն, Լեռնամերձ, Բագարան):

Արգինա, Մեծամոր գյուղ և Նորակերտ գյուղերի դպրոցների շենքերի ջեռուցումն իրականացվում է կաթսայատների միջոցով՝ հեղուկ վառելիքի օգտագործմամբ:

Եվս 6 դպրոցների շենքեր ջեռուցվում են էլեկտրական տաքացուցիչներով՝ Երասխահուն, Բերքաշատ, Ֆերիկ, Արաքս (Վաղարշապատի տարածք), Երվանդաշատ, Արտամետ:

Տարբեր համայնքների և դպրոցների գազաֆիկացման խնդիրն ընդգրկված է եղել տարբեր տարիների միջնաժամկետ ծախսային ծրագրերում, սակայն աշխատանքներ իրականացնելու նպատակով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: Գազաֆիկացման հետ կապված հարցերը կքննարկվեն համապատասխան ներդրումային ծրագրերի առկայության դեպքում:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Փ. Կարապետյան
Գ. Սայադյան